Մասնագիտության նկարագիրը	
Պաշտոնի /զբաղմունքի/ անվանումը	Արհեստավոր՝ էլեկտրասարքավորումների սպասարկման և նորոգման
I. Դերը	Էլեկտրասարքավուոմների սպասարկման և նորոգման արհեստավորն իրականացնում է ցածր լարման էլեկտրասարքավորումների, օդային և մալուխային գծերի, էլեկտրամեխանիկական սարքավորումների սպասարկում, դրանց ընթացիկ և կապիտալ նորոգում:
II. Խնդիրների բնագավառները	
<u>Խնդիրների բնագավառ 1.</u> Էլեկտրասարքերի և Էլեկտրասարքավորումների անխափան և հուսալի աշխատանքի ապահովում՝ տեխնիկական սպասարկման միջոցով:	
Աշխատանքային գործընթացը	• Ցածր լարման սարքերի, սարքավորումների ընթացիկ և կապիտալ նորոգման, կարգաբերման և կարգավորման կատարում՝ ըստ պահանջվող հրահանգերի, • ցածր լարման օդային և մալուխային գծերի ընթացիկ և կապիտալ նորոգման կատարում՝ ըստ պահանջվող հրահանգերի, • ցածր լարման սարքերի և սարքավորումների էլեկտրական սխեմաների պատրաստում:
Կատարման չափանիշներ	• ճիշտ է ներկայացնում ցածր լարման սարքերի և սարքավորումների ընթացիկ և կապիտալ նորոգումը, • ճիշտ է ներկայացնում ցածր լարման սարքերի և սարքավորումների կարգաբերումը և կարգավորումը, • ճիշտ է ներկայացնում օդային և մալուխային գծերի մոնտաժումը, նորոգումը և սպասարկումը
<u>Խնդիրների բնագավառ 2.</u> Էլեկտրասարքերի և Էլեկտրասարքավորումների անսարքությունների և թերությունների բացահայտում	
Աշխատանքային գործընթացը	• Անսարքություն ունեցող Էլեկտրասարքերի և Էլեկտրասարքավորումների էլեկտրական սխեմաների ուսումնասիրում, • Էլեկտրասարքերի և Էլեկտրասարքավորումների մակնիշին համապատասխան անսարքությունների ենթադրվող պատճառների ուսումնասիրում, • յուրաքանչյուրի հիմնավորման համար անհրաժեշտ ստուգումների կատարում,

	• անսարքության հիմնավոր պատճառի մատնանշում, • անսարքությունների բացահայտման ընթացքում անվտանգության կանոնների պահպանում:
Կատարման չափանիշներ	• ճիշտ է ներկայացնում անսարքություն ունեցող էլեկտրասարքերի և էլեկտրասարքավորումների էլեկտրական սխեմաները, • ճիշտ է ներկայացնում էլեկտրասարքերի և էլեկտրասարքավորումների մակնիշին համապատասխան անսարքությունների ենթադրվող պատճառները, • ճիշտ է կատարում յուրաքանչյուրի հիմնավորման համար անհրաժեշտ ստուգումները, • ճիշտ է մատնանշում անսարքության հիմնավոր պատճառը, • ճիշտ է ներկայացնում անսարքությունների բացահայտման ընթացքում անվտանգության կանոնների պահպանումը:
<u>Խնդիրների բնագավառ 3.</u> Պահպանելով սահմանված տեխնոլոգիան՝ անսարքություն ունեցող էլեկտրասարքերի և էլեկտրասարքավորումների նորոգում	
Աշխատանքային գործընթացը	• Անսարք հանգույցների և դետալների ապամոնտաժում սահմանված կարգով, • կատարել անսարք հանգույցների և դետալների ապամոնտաժում՝ պահպանելով աշխատանքների հաջորդականությունը, • փոխարինող հանգույցների և դետալների ընտրություն՝ պահպանելով դրանց էլեկտրական բնութագրերի համատեղելիությունը, • փոխարինող հանգույցների և դետալների տեղադրման աշխատանքների, կարգի պահպանում, • անսարք հանգույցների և դետալների ապամոնտաժման և փոխարինման աշխատանքների անվտանգության կանոնների պահպանում:
Կատարման չափանիշներ	• ճիշտ է կատարում (սահմանված կարգով) անսարք հանգույցների և դետալների ապամոնտաժումը, • ճիշտ է կատարում անսարք հանգույցների և դետալների ապամոնտաժումը՝ պահպանելով աշխատանքների հաջորդականությունը, • ճիշտ է կատարում փոխարինող հանգույցների և դետալների ընտրությունը՝ պահպանելով դրանց էլեկտրական բնութագրերի համատեղելիությունը,

	• ճիշտ է կատարում փոխարինող հանգույցների և դետալների տեղադրման աշխատանքները, կարգի պահպանումը, • ճիշտ է կատարում անսարք հանգույցների և դետալների ապամոնտաժման և փոխարինման աշխատանքների անվտանգության կանոնների պահպանումը:
<u>Խնդիրների բնագավառ 4.</u> Նորոգված էլեկտրասարքերի և էլեկտրասարքավորումների աշխատանքի ստուգում և փորձարկում	
Աշխատանքային գործընթացը	• Նորոգված էլեկտրասարքերի և էլեկտրասարքավորումների ստուգում, • նորոգված էլեկտրասարքերին և էլեկտրասարքավորումներին լարման սնուցում, • նորոգված էլեկտրասարքերի և էլեկտրասարքավորումների կարգաբերում և կարգավորում, • նորոգված էլեկտրասարքերի և էլեկտրասարքավորումների փորձարկում՝ շահագործման տարբեր ռեժիմներում, • նորոգված էլեկտրասարքերի և էլեկտրասարքավորումների ստուգման և փորձարկման աշխատանքների անվտանգության կանոնների պահպանում, • տարբեր սարքերի հետ օգտագործվող էլեկտրական սարքավորումների տեղադրում և համալարում, վերանորոգման և շահագործման աշխատանքների իրականացնում՝ համաձայն համապատասխան կանոնների: Ըստ անհրաժեշտության՝ խորհրդատվության տրամադրում:
Կատարման չափանիշներ	• Ճիշտ է կատարում նորոգված էլեկտրասարքերի և էեկտրասարքավորումների ստուգումը, • ճիշտ է կատարում նորոգված էլեկտրասարքերին և էլեկտրասարքավորում-ներին լարման սնուցումը, • ճիշտ է կատարում նորոգված էլեկտրասարքերի և էլեկտրասարքավորումների կարգաբերումը և կարգավորումը, • ճիշտ է կատարում նորոգված էլեկտրասարքերի և էլեկտրասարքավորումների փորձարկումը շահագործման տարբեր ռեժիմներում, • նորոգված էլեկտրասարքերում և էլեկտրասարքավորումներում փորձարկման տարբեր ռեժիմներում աշխատանքի շեղումներ չեն նկատվում,

	• ճիշտ է կատարում նորոգված էլեկտրասարքերի և էլեկտրասարքավորումների ստուգման և փորձարկման աշխատանքների անվտանգության կանոնների պահպանումը:
<u>Խնդիրների բնագավառ 5.</u> Խորհրդատվության և հրահանգավորման տրամադրում շահագործողին նոր նորոգված էլեկտրասարքերի և էլեկտրասարքավորումների շահագործման և դրանց տեխնիկական փաստաթղթերը լրացնելու վերաբերյալ	
Աշխատանքային գործընթացը	• Խորհրդատվության տրամադրում նոր նորոգված ինչպես տիպական, այնպես էլ առանձնահատուկ դեպքերի վերաբերյալ, • հրահանգավորում նոր նորոգված էլեկտրասարքերի և էլեկտրասարքավորումների պահպանման, շահագործման, սպասարկման վերաբերյալ, • լրացնել նոր նորոգված էլեկտրասարքերի և էլեկտրասարքավորումների տեխնիկական փաստաթղթերը:
Կատարման չափանիշներ	• ճիշտ է կատարում խորհրդատվության տրամադրում նոր նորոգված ինչպես տիպական, այնպես էլ առանձնահատուկ դեպքերի վերաբերյալ, • ճիշտ է կատարում հրահանգավորում նոր նորոգված էլեկտրասարքերի և էլեկտրասարքավորումների պահպանման վերաբերյալ, • ճիշտ է կատարում հրահանգավորում նոր նորոգված էլեկտրասարքերի և էլեկտրասարքավորումների շահագործման, սպասարկման վերաբերյալ, • ճիշտ է լրացնում նոր նորոգված էլեկտրասարքերի և էլեկտրասարքավորումների տեխնիկական փաստաթղթերը:
III.Պատասխանատվությունը /անմիջական պատասխանատվության շրջանակ/	էլեկտրասարքավուոմների սպասարկման և նորոգման արհեստավորը պատասխանատու է. • անսարքությունները ճիշտ որոշելու համար, • վերանորոգման և մոնտաժային աշխատանքները որակյալ կատարելու համար, • նյութերը խնայողաբար օգտագործելու համար, • ճիշտ խորհրդատվություն տրամադրելու համար, • աշխատանքների հետ կապված ծախսերի հաշվետվության վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելու համար:
IV. Լեզուները	հայերեն - գերազանց մեկ օտար լեզու - բավարար

V. Համակարգիչը	MS Word - բավարար Internet Explorer՝ բավարար
VI. Գիտելիքները	Էլեկտրատեխնիկայի հիմունքներ, տեխնիկական գծագրություն, վերանորոգման աշխատանքներում օգտագործվող նյութերի հատկությունները, էլեկտրասարքավորումների աշխատանքի սկզբունքները և աշխատանքային ռեժիմները, դետալների պարամետրերի բովանդակությունը
VII. Կարողությունները և հմտությունները	• անսարքությունների պատճառները բացահայտելու կարողություն, • անհրաժեշտ դետալները ընտրելու կարողություն, • սարքավորումներ օգտագործելու հմտություն, • տեղեկատու գրականությունից օգտվելու հմտություն, • գծագրերը և սխեմաները կարդալու հմտություն, • դետալները տեղադրելու և ապամոնտաժելու հմտություն, • սարքավորումների աշխատանքը կարգավորելու կարողություն:
VIII. Անձի որակական հատկանիշներ	Պարտաճանաչ, կարգապահ, հաղորդակցվող, խնայող, ճշտապահ, մաքրասեր, հումորի զգացում ունեցող, նորն ընկալող